«Էդիթ Պրինտ» հրատարակչություն

Ավարտական հետազոտական աշխատանք

Թեմա ՝ Ինտեգրված պարապմունքների կազմակերպումը՝ կարողունակահեն կրթական մոտեցման համատեքստում

Հաստատություն ՝ Երևանի թիվ 151 ՆՈՒՀ

Դաստիարակ ՝ Աիդա Զալյան

Ղեկավար՝ Ժաննա Ավետիսյան

2023թ.

Բովանդակություն

- Բովանդակություն……1
- Ներածություն……2
- Գլուխ 1 Ինտեգրված պարապմունքների կազմակերպումը կարողունակահեն կրթական մոտեցման համատեքստում…..4
- Գլուխ 2 Իտեգրված պարապմունքի կազմակերպումը որպես ճանաչողական, իմացական, սոցիալ հուզական ոլորտների զարգացման միջոց:……16
- Եզրակացություն……21
- Գրականության ցանկ……22

Ներածություն

Ինտեգրված պարապմունքները նպատակաուղղված են տարբեր մեթոդիկաների միջև կապերի դրսևորմանը, առարկաների կամ երևույթների համակողմանի ուսումնասիրմանը, գիտելիքների համակարգվածությանը, ստեղծագործական երևակայության զարգացմանը: Անհրաժեշտ է միևնույն թեմայի բովանդակության շուրջ կառուցել ինտեգրված պարապմունք և հստակեցնել առաջադրանքը պարապմունքի յուրաքանչյուր փուլում: Ինտեգրված պարապմունքի կառուցվածքային կողմը պահանջում է նյութի հստակություն և տարբեր մեթոդիկաների միջև տրամաբանական կապի ապահովում: Դա կարող է իրականացվել պարապմունքի ընթացքում՝ ինտերակտիվ մեթոդների և ժամանակակից մոտեցումների կիրառմամբ: Ինտեգրված պարապմունքը կառուցվում է մեկ ամբողջական գործունեության հենքով, որը միավորում է հսկայական տեղեկատվական դաշտ փոխադարձ ներթափանցմամբ և ընդհանրացումներով: Ինտեգրված պարապմունքները սկզբունքորեն պահանջում են հստակ մտածողություն և տրամաբանություն ուսուցման բոլոր փուլերում: Սա նպաստում է համահավաք, կենտրոնացված ծրագրային նյութի յուրացմանը՝ փոխգործուն աշխատանքների կիրառմամբ: Ընտրելով ինտեգրված պարապմունքների կազմակերպումը՝ կարողունակահեն կրթական մոտեցման համատեքստում կարծում եմ ինտեգրված պարապմունքները երեխային տալիս են բավականին լայն ու վառ պատկերացումներ շրջապատող աշխարհի մասին, ուր նա իրապես ապրում է, փոխհարաբերությունների մեջ է երևույթների և առարկաների հետ, կապված է աշխարհում առկա բազմաթիվ նյութական ու գեղարվեստական մշակույթների հետ: Ինտեգրված պարապմունքը ընկալվում է իր բազմազանությամբ՝ ապահովելով երեխայի ամբողջական պատկերացումներն ու բազմազան կապերը՝ տարբեր օբյեկտների և երևույթների միջև: Նման պարապմունքների շնորհիվ հնարավորություն է ստեղծվում, ուսումնական տարբեր ոլորտների փոխներթափանցմամբ, իրականացնել ընդհանուր եզրակացությունների հանգեցնող գործունեություն:

Հետազոտության նպատակն է նախադպրոցական տարիքի երեխաների մեջ ինտեգրված պարապմունք կազմակերպելով սերմանել և մշակել այնպիսի որակներ ու հատկություններ, ինչպիսիք են քննադատական մտածողությունը, հետաքրքրասիրությունը, անմիջականությունը, երևակայությունը, զարմանալու, աշխատանքից գեղագիտական հաճույք ստանալու սովորույթը: Առաջացնել

հետաքրքրությունը ինտեգրված պարապմունքների նկատմամբ,որ հիմնված է երեխային կարողունակահեն կրթական մոտեցման համատեքստում: Դրանք կառուցել մեկ ամբողջական գործունեության շրջանակում, ինչն կապահովի հսկայական տեղեկատվական դաշտ փոխադարձ ներթափանցմամբ և ընդհանրացմներով: Նմանատիպ պարամունքները երեխային տալիս են լայն պատկերացումներ շրջապատող աշխարհի մասին: Նա փոխհարաբերությունների մեջ է մտնում երևույթների և առարկաների, աշխարհում առկա բազմաթիվ նյութական ու գեղարվեստական մշակույթների հետ: Բոլոր երեխաներն այս կամ այն չափով օժտված են այս հատկանիշներով, բայց հաճախ կյանքի առաջին տասնամյակում կորցնում են դրանք: Մինչդեռ այդ հատկությունները կարևոր դեր են խաղում հատկապես սովորելու գործընթացում: Ինտեգրված պարապմունքի կազմակերպումը ապահովում է երեխայի մտավոր, սոցիալական, հուզական, ֆիզիկական և գեղագիտական ոլորտների համակողմանի ու ներդաշնակ զարգացումը: Բազմակողմանի զարգացած, ուսման մեջ հաջողակ երեխաները մեծանում են հոգատար, աջակցող միջավայրում: Այսպիսի մթնոլորտը զարգացնում է երեխաների մտավոր և լեզվական ունակությունները և ինքնավստահություն ներշնչում նոր ձեռք բերվող գիտելիքները կիրառելու համար: Դա է պատճառը, որ ես շատ եմ կարևորվում ինտեգրված պարապմունքների կազմակերպումը կարողունակահեն համատեքստում: Այսօր նպատակային հետազոտություն է պահանջում պարզելու թե որքանով են իտեգրված պարապմունքները նախադպրոցականին կրթական չափորոշիցիների հետ արդյունավետ՝ ծրագրային բաղադրիչ իրականացման գործընթացում: Հետազոտաան աշխատանքը կառուցված է ներածությունից, երկու գլխից, եզրակացություններից,օգտագործվող գրականութան ցանկից:

Գլուխ 1

Ինտեգրված պարապմունքների կազմակերպումը կարողունակահեն կրթական մոտեցման համատեքստում

«Մանկության ամեն մի օրը մի նոր բան է հայտնագործում շրջապատող աշխարհում:Ամեն մի նոր հայտնագործություն մարմնավորվում է որպես հեքիաթ, որի ստեղծողները երեխաներն են ... Երեխային պետք է ծանոթացնել յուրաքանչյուր առարկայի մյուս առարկաների հետ կապելով: Երեխաների համար պատուհան բացեք դեպի շրջապատող աշխարհը: Կարողացեք երեխայի համար շրջապատի աշխարհում հայտնագործել որևէ նոր բան, բայց դա կատարե՛ք այնպես, որ կյանքի այդ պատառիկը երեխաներին երևա ծիածանի բոլոր գույ ներով»

Վ.Սուխոմլինսկի

Ինտեգրված պարապմունքները նպատակաուղղված են տարբեր մեթոդիկաների միջև կապերի դրսևորմանը, առարկաների կամ երևույթների համակողմանի ուսումնասիրմանը, գիտելիքների համակարգվածությանը, ստեղծագործական երևակայության զարգացմանը: Ինտեգրված պարապմունքի կառուցվածքային կողմը պահանջում է նյութի հստակություն և տարբեր մեթոդիկաների միջև տրամաբանական կապի ապահովում: Դա կարող է իրականացվել պարապմունքի ընթացքում՝ ինտերակտիվ մեթոդների և ժամանակակից մոտեցումների կիրառմամբ Ինտեգրված պարապմունքները սկզբունքորեն պահանջում են հստակ մտածողություն և տրամաբանություն ուսուցման բոլոր փուլերում: Սա նպաստում է համահավաք, կենտրոնացված ծրագրային նյութի յուրացմանը՝ փոխգործուն աշխատանքների կիրառմամբ: Ինտեգրված պարապմունքները երեխային տալիս են բավականին լայն ու վառ պատկերացումներ շրջապատող աշխարհի մասին, ուր նա իրապես ապրում է փոխհարաբերությունների մեջ է երևույթների և առարկաների հետ, կապված է աշխարհում առկա բազմաթիվ նյութական ու գեղարվեստական մշակույթների հետ: Հիմնական շեշտը դրվում է ոչ այնքան որոշակի գիտելիքների յուրացման, որքան ստեղծագործական մտածողության զարգացման վրա: Սա հաստատում է երեխաների հետ գործնական աշխատանքի արդյունավետությունը՝ պարապմունքի տվյալ ձևի

կիրառմամբ:Նախադպոցական կրթության հիմնական նպատակն է՝ ապահովել երեխայի մտավոր, սոցիալական, ֆիզիկական, հուզական և գեղագիտական ոլորտների ներդաշնակ և համակողմանի զարգացումը: Եվ այդ զարգացման ամենատարածված միջոցներից է հատուկ կազմակերպված ուսուցման գործընթացը՝ ինտեգրված պարապմունքը: Խաղը նախադպրոցականի հիմնական կենսաձևն է, որը միշտ մնում է սիրված զբաղմունք: Խաղի դերը մեծ է երեխայի դաստիարակության և ուսուցման ընդհանուր զարգացման գործում: Հայ մեծանուն բանաստեղծ Հովի. Թումանյանը գտնում է, որ խաղը երեխայի «բնական, օրգանական պահանջն է, նրա լրջությունը, նրա էությունը»: Ուսումնական գործընթացում խաղն ու պարապմունքը պետք է հանդես գան միաժամանակ՝ լրացնելով միմյանց: Այսօր առավել արդյունավետ է նախադպրոցական դիդակտիկայում լայն տարածում գտած ինտերակտիվ մեթոդը: Ինտեգրված պարապմունքների հիմնական խնդիրներն են՝

- երեխայի համակողմանի դաստիարակությունը, կոնկրետ առարկաների մասին ամբողջական պատկերացումների ձևավորումը.

- տարբեր հասկացությունների ինտեգրմամբ գործունեության տարբեր ձևերում երեխային ընդգրկելը:

Ժամանակակից նախադպրոցական մանկավարժության կարևորագույն խնդիրն է՝ նախադպրոցական ուսումնական հաստատություններում ձևավորել և զարգացնել նախադպրոցական կրթական չափորոշչին ու կրթական ծրագրային պահանջներին համապատասխան սաների գիտելիքների, կարողությունների, հմտությունների, անձի ներդաշնակ զարգացման մակարդակ: Ցավոք, մինչ օրս ուսումնական գործընթացը մանկապարտեզում դեռևս պահպանում է գիտելիքների փոխանցման և յուրացման շատ հին մոտեցումներ: Ավանդական դասավանդման մեթոդները չեն կարողանում տալ սանին գլխավորը՝ սովորելու բերկրանքը, ինչն էլ իր հերթին սանի մոտ հանգեցնում է ստեղծագործելու ցանկության կորստի:

Ներկայիս հասարակությունը պահանջում է ակտիվ քաղաքացիներ, ովքեր ունակ կլինեն տալ ոչ ստանդարտ լուծումներ, կունենան ստեղծագործական մտածողություն, ճկուն միտք:

Սանի ապագա ստեղծագործական անհատականությունը զարգացնելու համար անհրաժեշտ են պայմաններ՝

- ✓ կազմակերպչական
- ✓ ուսումնաօժանդակ
- ✓ նյութատեխնիկական
- ✓ մասնագիտական

Եվ այս ամենի հիմքում պետք է դրվի ինտեգրված պարապմունքների կազմակերպումը և անցկացումը, սանի մոտ ալգորիթմային մտածողության զարգացումը, արվեստի ճյուղերի, խաղային տեխնոլոգիաների կիրառումը ուսուցման գործընթացում:

Ինտեգրված պարապմունքի ընթացքում կարելի է ինտեգրել մանկավարժական գործընթացի ցանկացած բաղադրիչ՝ նպատակ, բովանդակություն, ուսուցման մեթոդ և միջոց: Տարբեր է նաև ինտեգրված պարապմունքի տևողությունը: Բայց առավելաբար օգտագործում են երկու կամ երեք պարապմունքի ժամ՝ միավորված մեկ պարապմունքի մեջ: Այսպիսի պարապմունքի կազմակերպմամբ կարելի է ընդլայնել փոխանցվող ինֆորմացիան, փոփոխել ուսումնասիրության շրջանակները, խորացնել հասկացողությունը, հստակեցնել հասկացություններն ու օրենքները, ընդհանրացնել թեման, միավորել սովորողների փորձն ու դրա ըմբռնման տեսական մասը, համակարգել ուսումնասիրված նյութը: Իսկ համալիր պարապմունքները այն պարապմունքներ են, որոնք օգտագործում են տարբեր տեսակի գործողություններ՝ արհեստ, արվեստ, մաթեմատիկա, երաժշտություն, դիզայն, ձեռքի աշխատանք տարբեր համակցություններով: Նման պարապմունքներին սովորաբար նախորդում են թեմատիկ պարապմունքներ, քանի որ աշխատանքը հիմնականում հիմնված է երեխաներին ծանոթ նյութերի վրա: Տարբերությունը համալիր և ինտեգրված պարապմունքի միջև այն է, որ բարդ առաջադրանքները լուծվում են համալիրում, իսկ ինտեգրվածում մեկ խնդիր լուծվում է տարբեր տեսակի գործողությունների ինտեգրմամբ:

Այս տիպի պարապմունքները կարելի է անցկացնել տարբեր առարկաներից: Ինտեգրված պարապմունքները միավորում են տարբեր առարկաների մասնագետների ուժերը և ստեղծում միջառարկայական կապերով հարուստ պարապմունքի օրինակներ:

Այս թեմայի նպատակն է ընդգծել ինտեգրված և համալիր ուսուցման նշանակությունը կրթության որակի բարձրացման գործընթացում, միջառարկայական կապերի հիման վրա առարկայի կամ երևույթի համակողմանի ուսումնասիրումը, շրջապատող

միջավայրի գիտակցված ընկալումը՝ երեխաների ճանաչողական գործունեության

ակտիվացման բազմազան միջոցների կիրառմամբ:

<<Սանի լիարժեք ներդաշնակ զարգացման աղբյուրը նրա ճանաչողական, մտավոր, ստեղծագործական գործունեությունն է, որն ուղղված է ազգային, համամարդկային արժեքների, մշակութային ժառանգության պատմականորեն կազմավորված ձևերի յուրացմանը:

Նախադպրոցական կրթության որակի բարձրացումը պետությունը , հասարակությունը համարում են որպես գերակա խնդիր, և դրա իրագործման կարևորագույն երաշխիքն է՝ ստեղծել անհրաժեշտ համակողմանի նպաստավոր պայմաններ երեխայի լիարժեք և ներդաշնակ զարգացումն ապահովելու, սահուն

անցումով դպրոցական ուսուցմանը նախապատրաստվելու գործընթացին>>(Հ. Միտոյան):

Ինտեգրվում են աշխատանքի այնպիսի տեսակներ, որոնք նպատակաուղղված են ապահովելու նախադպրոցական կրթական չափորոշչով սահմանվող

վերջնարդյունքները: Դրանք են՝

- ✓ շարժողական ոլորտ
- ✓ խոսքի և հաղորդակցական ոլորտ
- ✓ ինքնասպասարկման անվտանգության, առողջ ապրելակերպի ոլորտ

Այս ոլորտային վերջնարդյունքների համագումարը սանի մոտ ձևավորում է հետևյալ կարողունակությունները.

1. <u>Լեզվական և հաղորդակցական կարողունակություն</u>՝

սանը տիրապետում է գրական հայերենին, հաղորդակցվում տարբեր իրավիճակներում և միջավայրերում, դրսևորում խոսքային և ոչ խոսքային ակտիվություն՝ մասնակցություն ունենալով հասարակական կյանքին: Ունակ է կողմնորոշվելլեզվական միավորներում՝ հնչյուն, բառ, նախադասություն, ունի տարրական պատկերացումներ վանկի, հնչյունի, տառի մասին:

2. Ճանաչողական և մոտիվացիոն կարողունակություն՝

սանը, իր տարիքին համապատասխան, ընդունակ է լինում պատճառահետևանքային կապեր տեսնել երևույթների, իրադարձությունների միջև: Նա ակտիվ ներգրավվում է գործունեության տարբեր ձևերի, մտավոր տարբեր գործողությունների, նոր բացահայտումների մեջ: Դրսևորում է ակտիվություն, հետաքրքրասիրություն, ճանաչողական հետաքրքրություն աշխարհի, առարկաների և երևույթներիր հանդեպ:

3. Ժողովրդական և քաղաքացիական կարողունակություն՝

նախադպրոցական տարիքում սանը տիրապետում է բարեվարքության պարզագույն կանոններին, դրսևորում է հարգանք և հոգատարություն շրջապատի հանդեպ, գնահատում է արարքների բարոյական ուղղվածությունը: Ճանաչում է հայրենիքը, Հայաստանի խորհրդանիշները (դրոշ, զինանշան, օրհներգ), դրսևորում է սեր և հարգանք հայրենի երկրի հանդեպ:Ունի տարրական պատկերացումներ սեփական իրավունքների և պարտականությունների մասին:

4. Թվային և մեդիա կարողունակություն՝

սանն ունենում է տարրական պատկերացումներ մեդիայի վերաբերյալ, կողմնորոշվում է մեդիա բազմազանության մեջ: Նա կարողանում է օգտվել մեդիա տարրական գործիքներից՝ միևնույն ժամանակ հասկանալով դրանց կիրառման հնարավոր վտանգները և այդ հարցում սեփական պատասխանատվությունը: Տարբերում է իրական և վիրտուալ աշխարհները, հասկանում է դրանց տարբերությունները:

5. Մշակութային կարողունակություն՝

սանը կարողանում է գնահատել գեղեցիկը, ճանաչում և վերլուծում է հանրահայտ հայ և արտասահմանյան մանկագիրների գեղարվեստական ստեղծագործությունները: Դրսևորում է ընդգծված հետաքրքրասիրություն գեղարվեստական գործունեության հանդեպ, ունակ է երաժշտության , կերպարվեստային գործունեության տարբեր տեսակների, ազգային տոների ու ավանդույթների միջոցով արտահայտելու սեփական հույզերը, զգացմունքներն ու տպավորությունները:

6. Մաթեմատիկական և տեխնիկական կարողունակություն՝

սանը կարողանում է կատարել պարզ մաթեմատիկական գործողություններ,

համեմատում, հետազոտում է առարկաները, երևույթները, գտնում է տարբեր խնդիրների լուծումներ, ճանաչում է թվանշանները, տիրապետում է նախաթվային և թվային հասկացություններին , կարողանում է որոշել առարկաների քանակը, համեմատել դրանք ըստ մեծության, չափի, ձևի և գույնի, տարբերակել մասը և ամբողջը, երկրաչափական պատկերները ըստ հատկանիշների: Կարողանում է առարկաները տարբերակել նաև ըստ նյութի:

7. <u>Տնտեսական կարողունակություն</u>՝

սանը կարողանում է համարժեք ճանաչել և վերլուծել մեծերի աշխատանքը և դրանից ստացված արդյունքները, գիտի տարբեր մասնագիտությունների անվանումներ և դրանց առանձնահատկությունները: Ցուցաբերում է տնտեսական պարզ հասկացությունների իմացություն, գիտի իր հետ առնչվող առարկաների ձեռքբերման եղանակները, կիրառում է տնտեսական պարզ բառապաշար: Ճանաչում է բնության երևույթները, գիտի բնության առանձին երևույթների վտանգների, դրանցից պաշտպանվելու մասին: Ունի տարրական պատկերացումներ շրջակա միջավայրի և դրա պահպանման վերաբերյալ: Այդ գործում հասկանում է սեփական դերն ու նշանակությունը: Մասնակցում է այդ գործընթացին:

8. <u>Ֆիզիկական կուլտուրայի կարողունակություն</u>՝

սանը պատկերացում ունի ֆիզիկական վարժությունների առողջարարական նշանակության, առողջ սննդի , առողջ ապրելակերպի վարման հիմնական կանոնների, ճիշտ կեցվածքի պահպանման մասին: Ընկալում է ֆիզիկական վարժությունների ճիշտ կատարման ձևը , ճանաչում և տարբերում է ամառային և ձմեռային մարզաձևերը: Երեխան ինքնուրույն կատարում է նմանողական շարժումներ, ընդհնուր զարգացնող վարժություններ: Վարժությունների կատարման ընթացքում, շարժախաղերում, թիմային խաղերում դրսևորում է ինքնուրույնություն, կարգապահոըթյուն, կամք, պատասխանատվութնուն, փոխօգնություն, ընկերասիրություն, նախաձեռնողականություն:

9. <u>Ինքնաճանաչողական և սոցիալական կարողունակություն</u>՝

սանը ճանաչում է իր արտաքին առանձնահատկությունները, ձեռք է բերում

սեռադերային պատկերացումներ: Երեխան ունի պատկերացում սեփական

հնարավորությունների մասին, վստահություն սեփական ուժերի և ակարողությունների հանդեպ: Ընդունակ է ինքնակազմակերպվելու, դրսևորում է ինքնուրույնություն և ինքնասպասարկման հմտություններ: Երեխան ճանաչում է սեփական և այլոց հույզերը, կարողանում է կառավարել սեփական հույզերը: Շփման մեջ նախաձեռնող է, դրսևորում է ընկերակցելու, համագործակցելու հմտություններ:

Ինտեգրված պարապմունքներն արդյունավետ են, երբ անցկացվում են խաղային ժամանակակից մեթոդներով: Ըստ Մ. Մոնտեսորիի՝ «Այն խաղը, որն ուսուցանող չէ՝ դատարկ խաղ է»: Երբ երեխան ուսուցանվող նյութը լրացնում է խաղի միջոցով, ապահովվում են բարձր տրամադրություն, հուզական դրական մթնոլորտ և ակտիվություն: Իսկ դրանք այն գործոններն են, որոնք անհրաժեշտ են երեխայի լիարժեք զարգացման համար: Այդ է պատճառը, որ մեր մանկապարտեզում կարևորվում է ինտեգրված պարապմունքների անցկացումը: Ինտեգրված պարապմունքները հնարավորություն են ընձեռում՝

- մեկ պարապմունքի միջոցով երեխային տրամադրել այն գիտելիքներն ու կարողությունները, որոնք տրվում են առանձին պարապմունքների ընթացքում,

- հետաքրքիր հնարների միջոցով երեխայի ուշադրությունը և հետաքրքությունն ուղղորդել դեպի թեման,

- ինտեգրված պարապմունքի թեման վերաբերում է կյանքին, և դրա շնորհիվ երեխան առարկայական գիտելիքների ու կարողությունների հետ մեկտեղ ձեռք է բերում նաև գործնական հմտություններ և գիտելիքներ,

- պարապմունքը չի կենտրոնացված միայն մեկ առանձնացված ոլորտի վրա, հետևաբար մեկ պարապմունքի ընթացքում երեխան ստանում է բազմակողմանի գիտելիքներ:

Պարապմունքի թեման ընտրելիս դաստիարակը պետք է հաշվի առնի դրա կարևորությունն ու հագեցվածությունը՝ բովանդակային առումով, ինչպես նաև, երեխաների տարիքային առանձնահատկություններից ելնելով, համապատասխանությունը կրթական ծրագրին Թեմատիկ ինտեգրված պարապմունքն իրենից ներկայացնում է պարապմունքի առավել ակտիվ ձև, որի ընթացքում երեխան ձեռք է բերում՝

- հոգատարություն շրջակա միջավայրի նկատմամբ,
- թիմում աշխատելու կարողություն
- սեփական կարծիքն արտահայտելու, դիմացինին լսելու կարողություն,
- ինքնուրույնություն
- բարդ իրավիճակներում կողմնորոշվելու հմտություն,
- խոսքը ճիշտ ձևակերպելու հատկություն,
- վերլուծուլական, դատողական կարողություններ,
- համաձայնեցված գործողություններ՝ խաղալ, խոսել, քննարկել, կատարելու հմտություն:

Ինտեգրված պարապմունքների ժամանակ մեկ թեմայի շուրջ տարվող քննարկումները, զրույցները, խաղերն ու վարժությունները երեխային օգնում են լինել ակտիվ, զգոն, ուշադիր: Այսպիսով՝ ինտեգրված պարապմունքները դաստիարակին հնարավորություն են տալիս երեխայի մեջ դաստիարակել որակներ, որոնք անհրաժեշտ են հասուն տարիքում:

Ստորև ներկայացնում եմ ինտեգրված պարապմունքի նմուշօրինակ:Հետազոտությունը անցակացվել է ավագ 2-րդ խմբում Գրաճանաչություն մեթոդիկայից:

Ինտեգրված պարապմունքների տեսակները

Ինտեգրված մոտեցումը համապատասխանում է նախադպրոցական դիդակտիկայի հիմնական պահանջներից մեկին. կրթությունը պետք է լինի փոքր ծավալով, բայց տարողունակ: Ինտեգրված պարապմունքի ընթացքում միշտ առանձնացվում է առաջատար առարկան, որը հանդես է գալիս որպես ինտեգրիչ և օգնող՝նպաստելով նյութի խորացմանը, ընդլայնմանն ու հստակեցմանը: Ինտեգրված պարապմունքը կարող են միավորել ինչպես տարբեր առարկաներն իրենց ամբողջ ծավալով, այնպես էլ առանձին առարկաների բաղադրիչներ ու մեթոդներ: Օրինակ՝ կարելի է ինտեգրել առարկաների բովանդակությունը՝ պահպանելով առաջատար առարկայի ուսուցման

մեթոդները, ինչպես նաև կարելի է ինտեգրել տարբեր առարկաների ուսուցման մեթոդիկաները՝ պահպանելով մեկ առարկայի

բովանդակությունը:

Նախադպրոցական կրթության մեթոդական գրականության մեջ չկա պարապմունքների համակցված, բարդ և ինտեգրված տեսակների առանձնահատկությունների հստակ սահմանում: Հաճախ մեկը փոխարինվում է մյուսով կամ ինտեգրված պարապմունքը շփոթվում է բարդ համակցվածի հետ: Չ.Ի Վասյուկովան, Օ.Ի.Չեխոնինը այս տեսակի զբաղմունքներին տալիս են հետևյալ բնութագրերը.

Համակցված - տարբեր տեսակի գործունեության կամ մի քանի դիդակտիկ առաջադրանքների համակցություն, որոնք չունեն տրամաբանական կապ միմյանց հետ (նկատելուց հետո բացօթյա խաղ է անցկացվում):

Համապարփակ - առաջադրանքների իրականացում տարբեր տեսակի գործողությունների միջոցով, որոնց միջև ասոցիատիվ կապեր կան (հրդեհային անվտանգության կանոնների մասին զրույցը վերածվում է թեմայի վերաբերյալ պաստառ նկարելու): Միաժամանակ գերիշխում է գործունեության մի տեսակը , իսկ երկրորդը լրացնում է այն, ստեղծում էմոցիոնալ տրամադրություն:

Ինտեգրված - համատեղ գիտելիքները տարբեր կրթական ոլորտներից հավասար հիմունքներով՝ լրացնելով միմյանց:

Հարկ է նշել, որ ինտեգրված պարապմունքների անցկացումը դաստիարակից պահանջում է հատուկ պատրաստվածություն և երեխաների մոտ համապատասխան թեմայի վերաբերյալ գիտելիքների և հմտությունների արդեն ձևավորված պաշար: Ուստի, ամեն օր նման պարապմունքների անցկացումը շատ դժվար է:

Համապարփակ և ինտեգրված պարապմունքները անպայման թեմատիկ են, որոնցում ընտրված թեման և հիմնական հայեցակարգը հիմք է հանդիսանում տարբեր տեսակի գործունեության առաջադրանքների համադրման համար: Հետևաբար, ինտեգրված և համապարփակ պարապմունքում ապահովվում է սաների գործունեության տարբեր տեսակների առկայությունը՝ համատեղելով տարբեր ոլորտների գիտելիքները: Բայց այս տեսակի պարապմունքները զգալիորեն տարբերվում են միմյանցից, թեև երկուսն էլ

հիմնված են միջառարկայական կապերի վրա: Համալիր պարապմունքը նախատեսում է տարբեր ծրագրային բաղադրիչներից, գործունեության տարբեր տեսակներից հարցերի և առաջադրանքների էպիզոդիկ ընդգրկում: Սա նպաստում է կոնկրետ հայեցակարգի խորը ընկալմանը և ըմբռնմանը: Օրինակ՝ «Աշուն», «Բնության սեզոնային փոփոխություններ» թեմաներն ուսումնասիրելիս դաստիարակն ակտիվացնում է սաների գիտելիքները զրույցի միջոցով, զրույցն ուղեկցելով նրանց թեմատիկ նկարներով: Եթե պարապմունքի հիմնական նպատակը «աշնանային » ամբողջական պատկերացում ստեղծելն է, ապա այն կինտեգրի տարբեր առարկաներից բովանդակություն : Նման ինտեգրված պարապմունքի առանձնահատկությունն այն է, որ տարբեր ծրագրային բաղադրիչներից գիտելիքների բլոկները համակցվում են կոնկրետ թեմայի վերաբերյալ գիտելիքների ամբողջական համակարգ ստեղծելու համար:

Այսօրվա մանկապարտեզներում ուսուցումը կազմակերպվում է առանձին առարկաներից ծրագրային գիտելիքների հաղորդման եղանակով, ինչն առանձին առարկաներից տրվող գիտելիքների ամբողջություն չէ, հետևաբար աշխարհի մասին տալիս է մասնատված, ոչ ամբողջական պատկերացում: Համաշխարհային մանկավարժական միտքը վկայում է, որ ուսուցման այս ձևը արդյունավետ չէ, և իբրև խնդրի լուծման ելք՝ առաջադրում է ինտեգրված ուսուցումը, որը միասնական մոտեցում է ցուցաբերում երևույթի ընկալմանը, գիտակցմանն ու յուրացմանը: Ինտեգրված ուսուցման ծրագրերը կազմվում են այնպես, որ մի առարկայից գիտելիքները հիմնվում են մեկ այլ կամ մի քանի այլ առարկաներից վերցրած գիտելիքների վրա: Սակայն ինտեգրումը տարբեր առարկաներից գիտելիքների տարանջատված միավորում չէ, այլ սերտորեն փոխկապակցված ամբողջություն:

Ժամանակակից մանկավարժական գրականության մեջ տարբերակվում են միավորված (ինտեգրված) պարապմունքի հետևյալ տեսակները.

- ✓ Միջառարկայական՝ երկու առարկաներ միջև, օր.՝ մաթեմատիկա-ապլիկացիա
- ✓ Բազմառարկայական՝ երկուսից ավել առարկաներ միջև, օր.՝ մաթեմատիկա-ապլիկացիա-երաժշտություն

Անհրաժեշտ է միևնույն թեմայի բովանդակության շուրջ կառուցել ինտեգրված պարապմունք և հստակեցնել առաջադրանքը պարապմունքի յուրաքանչյուր փուլում: Անհրաժեշտ է ընդհանրական հասկացությունները ներկայացնել հաջորդականությամբ, կիրառելով երեխաների ճանաչողական գործունեության ակտիվացման տարբեր

միջոցներ: Ինտեգրված պարապմունքն ուղղված է թեմայի ամբողջական բացահայտմանը գործունեության տարբեր ձևերի կիրառմամբ՝ խաղ, աշխատանքային գործունեություն, կերպարվեստային գործունեություն, պարապմունքներ: Մասնագիտական ուսումնասիրություններում մանրամասն վերլուծվել է ինտեգրված պարապմունքը՝ թե բովանդակային, թե կառուցվածքային կողմերով: Ինտեգրված պարապմունքի կառուցվածքային կողմը պահանջում է նյութի հստակություն և տարբեր մեթոդիկաների միջև տրամաբանական կապի ապահովում: Դա կարող է իրականացվել պարապմունքի ընթացքում՝ ինտերակտիվ մեթոդների և ժամանակակից մոտեցումների կիրառմամբ: Ինտեգրված պարապմունքին նախապատրաստվելիս դաստիարակը կարող է օգտվել ինտելեկտուալ քարտի մեթոդից: Ինտելեկտուալ քարտը որոշակի թեմայի բովանդակային ուսումնասիրման կառուցվածքային, տրամաբանական սխեմա է, որտեղ արտացոլվում են հանգուցային հասկացությունը կենտրոնում, իսկ օժանդակ հասկացությունները՝ հանգուցային հասկացության շուրջ: Մշակված քարտը հիմք է հանդիսանում տարբեր թեմաներով պարապմունքների հետագա մոդելավորման և անցկացման համար: Ինտեգրված պարապմունքին առաջարկվող թեմաներն են՝ «Ձուր», «Տարվա եղանակներ», «Կենդանական աշխարհ», «Տոնածառ», Բնություն», «Հաց», «Անտառ», «Իմ մանկապարտեզը», «Հայրենիք», «Մարտի 8», «Ամանոր», «Հայոց բանակի օր», «Անվտանգ վարքագիծ» և այլն:

Համալիր ինտեգրված պարապմունքներ կազմակերպելու հիմնական պահանջները

Համալիր ինտեգրված պարապմունք կազմակերպելու համար հարկավոր է իմանալ հետևյալ հիմնական պահանջները.

- ✓ ծրագրում ընդգծել յուրաքանչյուր ոլորտից նմանատիպ թեմաներ, որոնք ունեն ընդհանուր ասպեկտներ,
- ✓ բացահայտել կապերը գիտելիքի նմանատիպ տարրերի միջև,
- ✓ անհրաժեշտության դեպքում փոխել թեմայի ուսումնասիրության հաջորդականությունը,
- ✓ թեմայի ուսումնասիրության գործընթացում հաշվի առնել կոնկրետ առաջադրանքներ,
- ✓ պլանավորել պարապմունքի հիմնական նպատակն ու խնդիրը,
- ✓ պարապմունքի բովանդակության վերլուծություն,
- ✓ բացահայտել երեխաների օպտիմալ բեռնվածությունը (մտավոր, ֆիզիկական, խոսքային գործունեություն և այլն):
- ✓ գրականության ընտրանի

Գլուխ 2

Ինտեգրված պարապմունքի կազմակերպումը որպես ճանաչողական, իմացական, սոցիալ հուզական ոլորտների զարգացման միջոց:

Խումբ - ավագ 2-րդ

Տևողությունը - 35-40 րոպե

Թեմա- Տիեզերք

Պարապմունքի անցկացման համակարգ- ԽԻԿ

Կիրառվող մեթոդներ- Որոնողական, փորձարական, ինտերակտիվ

Նպատակը- Խորացնել բառի հնչունային վերլուծության կարողությունը: Ամրապնդել հնչունակապակցությունները արտասանելու ունակությունը: Կատարելագործել բառը վանկերի բաժանելու կարողությունը: Կազմել 2-4 բառով նախադասություններ ամրապնդման նպատակով: Շարունակել սովորեցնել գտնել բառին հակառակ իմաստով բառը: Զարգացնել բանավոր հաղորդակցումը, համահունչ խոսքը, պատկերավոր մտածողությունը , մանր մոտորիկան: Հետաքրքրքասիրություն առաջացնել դեպի փորձարարական գործունեությունը: Բառապաշարը հարստացնել՝ տիեզերանավ, մարտկոց, այլ մոլորակային, ձգողականություն, հրաբուխ աստղաբույլ, աստղագետ բառերով : Բացահայտել տիեզերքը պատկերելու առեղծվածները: Ընդլայնել երեխաների մտահորիզոնը տիեզերքի և այնտեղ կատարվող երևույթների մասին (հրաբուխ, այլ մոլորակայիններ, աստղեր լուսին, մոլորակներ) նկարագրել տիեզերքի գեղեցկությունը:

Զարգացնել երեխաների մոտ մեդիագրագիտությունը: Նպաստել երեխաների երաժշտական ընկալունակության ձևավորմանը , համադրել թեման երաժշտության

հետ: Դաստիրակել աշխատասիրություն, կոկիություն, բարիացակամ վերաբերմունք, փոխօգնություն: Ապահովել դրական- հուզական մթնոլորտ պարապմունքի ողջ ընթացքում:

Անհրաժեշտ նյութեր- Սլայդ, ավազե սեղան, աստղեր, 9 մոլորակներ, տիեզերանավ, սահիկ, պտտուտակով լույս, մուգ վարագույրներ, էկրան, փուչիկներ, գնդակ, նկարներ, էսենցիա, սոդա, աստղեր, փայտե մոլորակներ մանր և այլն:

Նախապատրաստական աշխատանք- Խմբասենյակի մի հատվածում դրված էր ավազե սեղան՝ կապույտ ավազով՝ ավազի մեջ թաքնված աստղերով և մոլորակներով: Աթոռակները դասավորված էր այնպես, որ տիեզերանավի տպավորություն էր ստեղծում, տիեզերանավի առջևի հատվածում դրված էր էկրան, առաստաղից կախված էին աստղեր: Մուգ վարագույր, գունավոր լուսային պտուտակ՝ լուսային էֆեկտ ապահովելու համար: Խմբասենյակի մյուս հատվածում ամբողջովին տիեզերքի տեսարան էր առաստաղից կախված էին աստղեր, մոլորակներ, լուսին: Մի կողմում դրված է գորգ , կանաչ այլմոլորակայիններ փուչիկի տեսքով, հատակի մյուս հատվածում աստղաբույլեր որտեղ համաստեղություններ են նկարների տեսքով: Հեռու դրված էր փայլաթղթից պատրաստած հրաբուխ, որի մեջ դրված էր շիշ (թաքնված հրաբուխի մեջ) լցված կարմիր ներկանյութ էսենցիայով, որպեսզի վերջում ավելացնելով սոդա ռեակցիայի մեջ մտնի և հրաբուխի տեսք ստանա: Հրաբուխի ներքևի հատվածում դրված էր տառեր, որոնք երեխաները դասավորելով պետք է ստանան հրաբուխ բառը:

Դաստ- Երեխաներ մենք այսօր հյուրեր ունենք, ողջունեք մեր հյուրերին:

Երեխաներ- Բարև ձեզ:

Լսվում է երաժշտության ձայն :

https://www.youtube.com/watch?v=0FAdGk9uKJo

Դաստ- Երեխաներ, այս ինչ հետաքրքիր երաժշտության ձայն է եկեք գնանք , երաժշտության հետքերով:

Քայլում են դեպի ավազե սեղանը:

Դաստ- ՕՕՕ այս ինչ հետաքրքիր է, երեխաներ ինչի եք նմանեցնում այս ավազե սեղանը:

Երեխա- Ջրի, օվկիանոսի, երկնքի ...

Դաստ- Այսօր մենք ճանապարհորդության պետք է գնանք, իսկ թե որտեղ դուք կիամանաք հանելուկը գուշակելոից հետո" Հանելուկը սովորական չէ այն տաքնված է ավազի մեջ" հիմա մոտեցեք եւ փորձեք կռահել հանելուկը"

Երեխաները մոտեցան ավազի միջից հանեցին աստղեր, մոլորակներ, լուսին, քարեր, երկնաքարեր

Դաստ- իսկ ինչ եք կարծում մենք որտեղ ենք ճանապարհորդելու

Երեխա- Տիեզերք

Դաստ- Շատ ապրեք երեխաներ մենք ճանապարհորդելու ենք տիեզերք" Իսկ ինչով կարող ենք գնալ:

Երեխա- Տիեզերանավ

Երեխանները գալիս և տեղավորվում են նախապես տիեզերանավի տեսքով դասավորված աթոռակներին:

Դաստ- Հիմա հարմար զբաղեցրեք ձեր տեղերը, կապեք ամրագոտիները, պատրաստ 3,2,1

Զայնագրություն

Զայնագրություն- Ուշադրություն ,ուշադրություն տիեզերանավը չի կարող շարժվել այն պետք է լիցքավորել, իսկ լիցքավորման համար դուք պետք է պատասխանեք մի քանի հարցերի:

Զայնագրություն -Ինչ է վանկ

Զայնագրություն - Ինչ է տարբերություն հնչյունի և տառի միջև

Ձայնագրություն - Ինչ է բառը

Ձայնագրություն -Ինչ է նախադասությունը

Հերթով տալիս են պատասխանները ամեն հարցից հետո:

Տիեզերանավը լիցքավորվում է և շարժվում : Սենյակը մուգ վարագույրներվ փակվում մթություն է ստեղծվում վառվում են լույսեր աստղերի տեսքով , էկրանին հայտնվում է սահիկ:

Սահիկ նկարներով և երաժշտությունով:

Երեխաները պատմում են իրենց տեսածը տիեզերանավից:

Դաստ- Ահա և մենք հասանք տիեզերք, ինչպես գիտեք տեզերուքում ձգողականություն չկա և այնտեղ քայլելը շատ դժվար է, եկեք հիմա փորձենք քայլել:

Ֆիզ դադար- դժվար ծանր քայլք (երաժշտության ներքո https://sefon.pro/mp3/9134-zemlyane-trava-u-doma/)

Դաստ- Ահա մենք հասանք լուսնի վրա, հիմա նստեք գորգին և մի խաղ խաղանք խաղը կոչվում է «ԱՍԱ ՀԱԿԱՌԱԿԸ»:

Դաստ- Դե երեխաներ եկեք շարունակենք մեր ճանապարհը:

Հանդիպում այլ մոլորակայիների հետ:

Հնչարտաբերման վարժություններ:

Դաստ- Երեխաներ եկեք շարունակենք մեր ճանապարհը: Ինչպես գիտեք մեր աստղագետները աստղերի խումբ տարբեր կենդանակերպերի են նմանեցրել հիմա եկեք շրջան կազմենք և խաղանք մի խաղ, խաղը կոչվում է« ՎԱՆԿԱՏԻՐ ԱՍՏՂԱԲՈՒՅԼԸ»

Շարունակում են ճանապարհը-------

Երեխաններ ինչպես երկրի վրա այնպես էլ տիեզերքում գոյություն ունեն հրաբուխներ, հրաբուխները լինում են քնած և արթուն: Կուզեք մենք արթնացնենք հրաբուխը:

Այն արթնացնելու համար դուք նախ պետք է տրված տառերից ստանաք հրաբուխ բառը: Բառը կազմելուց հետո փորձարկման միջոցով հրաբուխը ժայթքում է:

Երեխաներ հիմա ժամանակն է վերադառնալ մեր մոլորակ,մոտենանք տիզերանավին, կապենք ամրագոտիները 3.2.1------

Դաստ- Երեխաներ ինչը ձեզ դուր եկավ:

Ինչ զգացողություններ ունեցաք:Վերջում թղթին են հանձնում իրենց տպավորությունները:

Եզրակացություն

Այսպիսով իմ համոզմամբ ինտեգրված ամփոփիչ պարապմունքներն առանձնահատուկ նշանակություն ունեն կրթական գործընթացում: Դրանք սովորական պարապմունքներից տարբերվում են այն առումով, որ այստեղ ամփոփվում, ամբողջացվում և ամրակայվում են անցած նյութի բովանդակությունը վերարտադրելու երեխաների կարողությունները: Հետազոտության արդյունքում համոզվեցի,որ ինտեգրված պարապմունքները նպաստում են նաև երեխաների միջև խաղային և խոսքային փոխհարաբերությունների կայացմանը, ինչպես նաև հիշողության, իմացական և հուզական ոլորտների զարգացմանը: Ինտեգրված պարապմունքներն ապահովում են երեխայի ներդաշնակ զարագացումը և ապահովում ուրախ, աշխույժ մթնոլորտ: Նման մթնոլորտ երեխաներին վստահություն է ներշնչում արդեն իսկ ձեռք բերած գիտելիքները հմտորեն կիրառելու համար: Դա է պատճառը, որ իմ պարապմունքներում չափազանց կարևորվում եմ ինտեգրված պարապմունքների դերը:

Գրականության ցանկ

1. Ծննդից մինչև վեց տարեկան երեխաների զարգացման և կրթական չափորոշիչներ 2018թ
2. Մանկապարտեզի ավագ խմբի (5-6տարեկանների) կրթական համալիր ծրագիր 2007թ
3. Վաղ գրաճանաչությունը մանկապարտեզի ավագ խմբում 2007թ
4. Էկոլոգիական դաստիարակությունը նախադպրոցական թարիքում (մեթոդական ուղեցույց մանկապարտեզների դաստիարակների համար)
5. https://www.prodlenka.org/metodicheskie-razrabotki/83505-integrirovannye-zanjatija-kak-sredstvo-razvit